



**«ԱՐՑԱԽՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2012 թ.

N 4-2012/01

ք.Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽՆ ՀԷԿ» ԲԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՄՆ ԴՈՒՍՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՈՉ
ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ
ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասի «է» ենթակետը, 61 հոդվածի 1-ին մասը, «ԱՐՑԱԽՆ ՀԷԿ» ԲԲԸ կանոնադրության 12.5. կետը և «ԱՐՑԱԽՆ ՀԷԿ» ԲԲԸ նիստի թիվ 4-2012 արձանագրությունը, ինչպես նաև «ԱՐՑԱԽՆ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի 09.08.2012թ. 3-2012/03 որոշմամբ թողարկված և 29.11.2012թ. ՀՀ ԿԲ-ում գրանցված ազդագրի ուղեկցությամբ տեղաբաշխվող ԱՄՆ դոլարով արտահայտված անվանական պարտատոմսերի տեղաբաշխումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով՝ «ԱՐՑԱԽՆ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԱՐՑԱԽՆ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի 09.08.2012թ. 3-2012/03 որոշմամբ թողարկված և 29.11.2012թ. ՀՀ ԿԲ-ում գրանցված ազդագրի ուղեկցությամբ տեղաբաշխվող 600 (վեց հարյուր) հատ, 10,000 (տասը հազար) ԱՄՆ դոլար անվանական արժեքով ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումն երկարաձգել մինչև 2013թ. հունվարի 16-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի դեկտեմբերի 15-ից:

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոսյան